

ԽԱՅՐԱԿ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄԱՆԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻՒ 2

Խմբագրապետ
Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Արտոնագրատեր
Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաւառի վերահսկիչ
Գաւառի կառիք
Մալաժ կօփիլը (ռուսաս.)
Բանուորանին
Գաւառի ծայեր
Յեղատիոխորքներ եւ Յեղատիոխաւքներ

ԽՍԲ. Մ. ԻՓԷՔՃԵԱՆ
ԱՐԳՈՄ ԳՆՈՒՆԻ
Թրգմ. ԻԲՕՖ. Գ. Յ. ԿԻԻԼԵԱՆ
ԳԱԳԻԿ ՕԶԱՆԵԱՆ
ՀՄԱՅՆԱԿ ԱՐԱՄԵԱՆՅ
Թ. ԺԱՄԿՈԶԵԱՆ

Թղթակցութիւններ եւ յուրեր

Շաշտրդ՝ քիւով յօդուածներ՝

ԲԻՕՖ. Գ. Յ. ԿԻԻԼԵԱՆԷ

ԳԱԳԻԿ ՕԶԱՆԵԱՆԷ

ՄԱՄԻԿՈՆ ՎԱՐՔԱՊԵՏԵԱՆԷ

ԹԱԴԷՈՍ ԺԱՄԿՈԶԵԱՆԷ

Զինուորաբիւրօ եւ հիւրեր (ռուս.)

Գաւառիպետ Ազգ. Վեր. գործիւն մէջ (ռուս.)

Վաշխառուները գաւառի մէջ

Յեղ. եւ Յեղատիոխաւքները

ԱՄԱՍԻԱ

Տպագր. ՅՈՎ. ՆԱՆԵԱՆ եւ ԵԱՐՏԸՄԵԱՆ

«ԱՄԱՍԻԱ»Ի ՀԱՍՑԷՆ

آماسیہ دہ «آماسیہ» غزنی سی مدیریتہ

Խմբագրութիւն «ԱՄԱՍԻԱ» Կիսամսեայ հանդէսի-Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին և 15ին, թուրքերէն և հայերէն բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն տարեկան 24 թիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա տարեկան	1 մեծիս	Արսասահման տարեկան	5 ֆր.
» վեցամսեայ	0.50 »	» վեցամսեայ	2.50 »

Բաժնեզինքը բացարձակապէս կանխիկ է: Ծանուցումներու համար առանձին նպաստաւոր պայմաններ կը տրուին:

Տաւր օրինակ «Ամասիա» սպառողին՝ մէկ օրինակ նուէր:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ

Այն հեղինակները որ կը փափաքեն իրենց հեղինակութիւնները «ԱՄԱՍԻԱ»ի մէջ ազդարարուած տեսնել, թող բարեհաճին մէյմէկ օրընակ անոնցմէ խմբագրութեանը ուղարկել:

ԳԱԻԱՌԱՅԻ ԳՐԱՂՆԵՐՈՒՆ

Փափաքելի է որ գաւառա ի գրագէտները, գաւառի կեանքը պատկերացնող իրենց գրութիւններովը զարդարեն «Ամասիա»ի սիւնակները յաճախակի:

ԲՈՒՐԹ ԹԵՐԹ ՍՏԱՅՈՂՆԵՐՈՒՆ

«Ամասիա»ի առաջին թիւէն մինչև երրորդ թիւը մեր բաւոր բարեկամներուն և ծանօթներուն իբր նմոյշ պիտի ղրկուի՝ խնդրելով որ մինչև այն ատեն բաժանորդներու ճիշտ ցանկը բարեհաճին մեզի ղրկել: Իսկ անոնք որ չեն ուղիւր բաժանորդագրուիլ, թող բարեհաճին առաջին առթիւ իրենց ղրկուած թերթերը վերագարձնել խմբագրութեանս:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարգուանէն Տեար Մամիկոն Վարժապետեան 1 օրինակ «Ամասիա» կը նուիրէ, Կարին իր զաւկին Պրն. Վ. Վարժապետեանի:

Ամասիայէն Տեար Յարութիւն Արուսեան 1 օրինակ «Ամասիա» կը նուիրէ Ամերիկա Տեար Մինքան Արուսեանի:

ԽԱՐԱԿԱՆ

ԳԱԻԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 2

Խմբագրական

ԳԱԻԱՌԻ ՎԵՐՔԵՐԷՆ

Գաւառի բաղձազան վէրքերէն ամէնէն ուշագրաւն և ամէնէն կենսականն է զինուորական կեանքը, որուն մէկ որոշ գրուագը հոս պիտի պատկերացնենք մեր բողոքներուն հետ:

Քանի մօր առաջ՝ առիթն ունեցանք երկու զինուորներու զգացումներուն ծանօթանալու. ասոնցմէ մին Արաբիոյ այրող գօտիին առկա զինուորական ծառայութիւն ըրած և այդ միջոցին վիրաւորուած, յետոյ հինգ ամիս Պէյրութի հիւանդանոցներուն մէջ դաբմանուելով՝ հազիւ ամիսէ մի վեր հայրենի օճախը վերագարձած էր: Իսկ միւսը Մակեդոնիոյ արիւնոտ ընդհարումներու նկարագրութիւնները, վառօդի մահացու զգայնատութիւններով կը ներկայացնէր: Երկուքն ալ ֆիզիքական կատարելութիւն կը ներկայացնէին:

Հարցուեցաւ առաջնոյն թէ ի՞նչ արամադրութիւններով մեկնած էր և այժմ հոգեկան ի՞նչ փոփոխումներու ենթարկուած: Կարծես վէրքն էր որ անուշագրութեամբ խառնած էին: Սկսաւ յուզուիլ, փրփրիլ, և հայրենասիրական վառ զգացումով դատապարտել զեղծանոց այն պաշտօնեաները, որոնք ամբողջ զինուորներուն ասելութեան ու անարգանքին ենթարկուած էին: Պատմեց աշխիսի միջադէպեր, որոնց մանրամասն բացատրութիւնները թէրևս կը վիրաւորեն Պատերազմական նախարարութեան զգացումները: Միայն պարագայ մը յիշել պէտք կ'զգանք:

Երբ հազիւ դարմանուած Պէյրուժ, փոխադրիչ զինուորական պաշտօնեաներու ատելութեան ու ծայրայեղ անարգանքին ենթարկուելէ վերջ կը հասնի Պօլիս. հոն ալ համանման պաշտօնեաներու կողմէ « առակէիք, ինչո՞ւ եկաք » ի նման ծանր ու վիրաւորիչ խօսքերը երբ կը լսեն, բոլորովին յուսահատ, մէկ կողմ թողած զինուորական կարգապահութիւնը, իրենց մօտած, պատուած յնչոտիներով, և քանի մ'օրէ ի վեր անօթութենէ բողբոջ ստամոքսներով, կը ներկայանան պատերազմական նախարար Շէվքէթ փաշայի, որ իր կարգին անմիջապէս կ'անչլելով պատասխանատուները և յոյց տարով անոնց վիճակը կը յանդիմանէ և կը հրամայէ որ պէտք եղած խնամքը ըլլայ: Ուրախ ենք որ պատերազմական նախարարը կը հետաքրքրուի ի՞նչս այս թշուառութեան և անմիջապէս կը հրամայէ որ դարմանուի անոնց կրած վիշտը, ստաւապանքը, անարգանքն ու անօթութիւնը:

Մակեդոնիայէն վերադարձող զինուորը, այն ևս կը պատմէ թէ, փոխադրիչ պաշտօնեաներու անպարտաճանաչութիւնը, զինուորական սպաներու անհոգութիւնը, հարիւրաւոր թարմ ու կենսական ոյժեր, հայրենիքին ջիղը կ'ազմող բազուկներ, նոյն այդ պաշտօնեաներու անհոգութեան պատճառաւ դողբեցան սուրբելէ այն ատեն՝ երբ ուրախ զուարթ հայրենիքի հանդէպ պարտականութիւնը կատարողի մը գոհունակութիւնը ու երջանկութիւնը ըմբռնանալով վիճակին մէջ էին, երբ իրենց ծնողքը, սիրելիները, և անուշիկ ձագուկներին իրենց բազուկներուն մէջ սեղմելու երազկոտ հրճուանքներով իրենց սիրտը կուռէր, և բոլոր մը առաջ կ'ուզէին թռչիլ հայրենի օճախին մօտ՝ վառ պարտականութիւններով բեռնաւորուած: Ճիշտ այս պահուն մեռնիլ, վերջ տալ կեանքի ամբողջ երազներուն, այս է որ յուսահատեցուցիչ է Զինուորին համար. այս է որ լքել կուտայ զինուորին իր սուրը, այս է որ հըռ զինուորը կ'ըմբոստայնէ: Ինչպէս կ'ըսէր թաթար զինուորը՝ « հայրենիքի համար մեռնիլ, այդ շատ քաղցր ու հաճելի է. սակայն մեռնիլ՝ ապիկար ու շահամոլ պաշտօնէութեան պատճառաւ՝ այս է որ յուսահատեցուցիչ է: Երբ թշնամին գայ, կրակին կուրծք տալ, վառօգի մուխին մէջ նետուիլ՝ շատ հեշտ է, սակայն մեռնիլ անօթութենէ, պաղառութենէ, անխնամ ձգուելէ, այս է որ զինուորը կը վհատեցնէ ու անոր մէջ կը մարէ բարոյական կորովը »:

Հո՞ս, մենք ստիպուած կը տարուինք քանի մը հարցումներ ընելու:

1 = Ի՞նչ է պատճառը որ այսպէս օր ցերեկով վայրագութիւններ կը գործուին, և պատերազմական նախարարութիւնը գեռ քանի մը պատասխանատու սպաներ հրացանի բռներէ չի տուաւ:

2 = Ի՞նչու գոյութիւն ունին այս զեղծանոգները, երբ զինուորական տիրելին այսքան խիստ է զեղծումներու հանդէպ:

3 = Ի՞նչ է միջոցը դարմանելու համար այս շարաւոտ վէրքը՝ որ տակաւ

կ'սպառնայ ամբողջ մարմինը թունաւորելու:

Նախ, մեր տեսութեամբ այս վայրագութեանց պատիժը՝ պէտք է ժողովուրդը ինքը տայ: Անոնք որ իրենց սիրատուն զաւակները, կամ սիրելիները հայրենիքը պաշտպանելու համար զրկած են, արդեօք ձանձրացած են անոնցմէ որ անոնց մահը երբէք չազդեր իրենց սրտին: Մի՞թէ այդքան դիւրին էր տանը նեղուէն բաժնուիլ և անտարբեր մնալ անոր պատճառներու մասին: Վստահ ենք թէ իրենց հոգեհոտորին, մահուան սարսաղ-դեցիկ յաւրը կ'ելեկտրականացնէ զիրենք: Սակայն անոնք ինչո՞ւ լաւով, ժամանակաւոր սուգ մը սրահելով և ամէն բան դասերին վերադրելով կը բաւականանան: Սակայն իբր գաւառացի, և գաւառի ցաւերուն գիտակից, պարտք կ'զգանք ըսել թէ՝ միայն դասերին վերադրելով բաւականանալու չէ: Ժողովրդային գիտակցութեան եկէք, ձեր իսկական շահերուն պաշտպանութեան պիտիլը առաջնորդուեցէք: Փնտռեցէք ձեր սիրելիներուն մահուան պատճառները, եթէ իրականապէս դասերն է՝ համակերպեցէք, իսկ եթէ կարգ մը անպարտաճանաչ պաշտօնեաներ պատճառ եղած են անոնց կեանքին ոչնչացումին, բողոքեցէք, օրինական շաղի մէջ վրէժխնդիրը եղիք ձեր զաւակներուն մահուան պատասխանատուներուն հանդէպ և այս կերպով օժանդակած պիտի ըլլաք նաև պատերազմական նախարարութեան արգար գործունէութեան:

Երկրորդ հարցման պատասխանը շատ աւելի որոշ ու այսպանելի է: Գոյութիւն ունին և պիտի ունենան այս զեղծումները, քանի որ խաթրը ու շահախնդրութիւնը գոյութիւն ունին:

Ասոնց բոլորին դարմանը՝ շատ պարզ է. եթէ բարի արամապրութիւններով օժտուած քանի մը կարեւոր բարձրաստիճան սպաներ ունենանք, և աւերող սպաներու կեանքն ու գործունէութիւնը խիստ ֆոնքրոյէ մը անցունենք, շատ դիւրութեամբ կը մաքրուին զեղծանոցները:

Ոմանք այնպէս կ'ուզեն հաւատալ թէ՛ ներկայ բոլոր պաշտօնէութիւնը քանի որ բռնապետական շրջանի ծնունդն են, այս գործելակերպով պիտի չարունակեն իրենց գործը: Մենք փաստեր ունինք ցոյց տալու թէ՛ հասարակ պաշտօնէութիւնը պատասխանատու չէկ, այլ ուղղակի երկրին ճակատադիրը անօրինող զեկավարները...:

Երէկուան բանւորները, հարստահարիչները ինչպէս անմիջական գոյն փոխելով եզան թունդ. ի՞նչ հաստականներ, անանկ ալ խիստ ֆոնքրոյի մը ներքեւ պիտի գտնան բացարձակ ճշտապահներ:

Յիշէ՛ք կը պահանջենք որ մարդկային հազարաւոր կեանքերու հետ գործ ունեցող զինուորականներ աւելի ուշադիր և պատասխանատու զգան ինքզինքնին, քանի որ իրենց մէկ փոքր անուշադրութիւնը պատճառ կը դառնայ հազարաւոր վառ օճախներու մարելուն:

Ներկայ Թուրք և Իտալական պատերազմի առթիւ յանուն լացող մայրերու և քոյրերու, մեր ղեկավարներուն դիտել տալով կ'ըսենք թէ՛ անո՛ք կը զոհեն հայրենիքի սիրուն իրենց հազեհատորները, սակայն խնայեցէք անոնց, խղճացէք անոնց թշուառութեան և գութ ունենալով որբերուն վրայ, սուրիկ, հրացանիկ և քնքանդակ, յառաջ բերած աւերներուն վրայ, անկարող և անսպասանակալ պաշտօնէութեան տուած զոհերն ալ մաեղցնէք: Այս է տառապող ու հլու ժողովրդեան փափաքն ու պահանջը:

ՄԻՆԱՍ ԻՓԷՓՃԵԱՆ

ԳԱԽԱՌԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Թրքական սահմանադրութենէն երեք տարի վերջ այսօր չէ որ կուզենք շեշտել բնի ու մամուլի ազատութեան կենսունակ կարևորութիւնը, այդ ինքնին հասկնալի և բացայայտ իրականութիւն մընէ:

Մամուլ ու բեմ և անոնց ազատութիւնը՝ ժողովուրդին հասարակ իրաւունքի ամբողջութեան մէկ մասը կը կազմեն և այդ հաշուով պէտք է մօտենալ անոնց: Հո՛ն, ուր դուրս կուգայ նոր հասարակարգերու նկատմամբ անընդունակ մտայնութիւններ ցուցադրող ղեկավար պաշտօնէութիւն մը, հոն սակաւին ճիգեր ի գործ կը դրուին ժողովրդեան հասարակ իրաւունքները կապտելու, կրճատելու, պոչտակելու, և դա՛ արդէն հասարակական ոճը մէ: Դժբախտաբար մեր կեանքի ներկայ իրականութիւնը զմեզ այդ կարգի ոճրագործներով չըջապատած է: Ոճրագործներ, որոնք սակայն վերջ ի վերջոյ պիտի իյնան դիտապատ ժողովրդաշայն արդար զայրութիւն առջև: Այդ օրը չատ հեռու չէ մեզմէ:

Գաւառին ազատ մամուլ և ազատ խօսք է ահրա էեշտ:

Վետութեան մը ջգայրն դրութիւնը կը կազմեն գաւառները: Ինչպէս որ կազմախօսութեան մէջ ջգայրն դրութիւնը կեանքի յարատեւութեան և առողջութեան աղբիւրը կը կազմէ, անանկ ալ պետու-

թեան կեանքն ու հոգին գաւառն է: Ներկայիս տիրող քաղաքական դրութեան պահանջումով գաւառներն ու գաւառային կեանքը ամբողջ պետութեան մը կեանքը կ'արժեն: Վերցնե՛ք գաւառային կեանքը՝ պետութիւնները իսկոյն պիտի չքանան: Խեղաթիւրեցէ՛ք, վատասերեցէ՛ք գաւառային պարզուկ, անշահախնդիր կեանքը՝ և ա՛ա ամբողջ պետութիւնը վատասերուած պիտի գտնէք: Իսկ, ընդհակառակը, եթէ գաւառի կեանքն է որ ամէնէն աւելի մեր ուշադրութեան առարկայ կը դարձնենք և անոր կուտանք այն բոլոր անհրաժեշտ պիտոյքները, որոնք այժմ հրամայողական պահանջ դարձած են. երբ ամէնէն աւելի գաւառներու մէջ գոյութիւն ունեցող զուլումներու, արհաւիրքներու, տնտեսական տագնապներու պատճառները որոնելով կը ձրգտինք զանոնք բաց վանել գաւառներէն և ստեղծել լաւագոյն դրութիւն մը կեանքի ամէն տեսակէտներէն ալ, երբ գաւառային հանգարտ, ապահով ու ազատ կը թողունք իր չլնարար ու ստեղծագործող աշխատանքին մէջ, արդէն պետական ընկերային կեանքը դրած պիտի լլաւանք բարեշրջութեան ճամբուն մէջ: Սա՛նայնքան բացորոշ ճշմարտութիւն մըն է, որուն ս'չ ոք կ'ուզէ հակառակը պնդել: Գաւառը, երկրի և պետութեան այդ հո-

գին, պէտք է մեր բոլոր գուրգուրանքներուն, բոլոր անձնագործութեանց ընդունարանը դառնայ, որովհետեւ առանց ասոր արդէն անկարելի կ'ըլլայ բարեկարգել զայն և հետեւաբար ալ ամբողջ պետութիւնը:

Ամէն անկեղծ ու գիտակից քաղաքացիի մրակ նպատակն ու խոչալը պէտք է ըլլայ ի նորիէ երկրին բարեկարգութիւնը ու անոր բարգաւաճումը, և առ այդ իր բոլոր քաղաքացիական պարտականութիւնները տրամադրելի ընէ: Այս անկեղծ ցանկութիւնը, մենք կը սիրենք հաւատալ թէ, կրնայ գոյութիւն ունենալ բոլոր սահմանադրասէր տարրերուն մէջ ալ: Ամէնքն ալ միեւնոյն փափաքով ու իղձով առկրուն՝ կը ջանան իրենց կարողութեան ու բնութեամբներուն համաձայն միջոցներ ներկայացնել, պահանջելով անոնց գործադրութիւնը, ի նպատակ երկրին յառաջադիմութեան: Սակայն հոն է էական նարը թէ այդ միջոցներէն ո՞րը կրնայ հիմնական ու սիւսիւսաբար դարձան մը ստեղծել մեր արիւնաքամ երկրին շաբառաւ վերքերուն:

Այն անհրաժեշտ ու կենսական հարցը որ յաճախ մատնանիչ եղած է այս կամ ան որսոյաւ քաղաքացիներուն և աւելի քաղաքական կուսակցութիւններուն կողմէն, գաւառական կեանքի բարեկարգութիւնը եղած է: Անոնք խորապէս համոզուած են, թէ առանց այդ կենսական նարչին լուծման՝ երկիրը բարեկարգելու և յառաջադիմութեան շաւղին մէջ դնելու բազմանք միտիայն անուշ բազմանք պիտի մնայ, գործնական իրականութիւն մը ստեղծուելու: Ասոր համար չէ՛ որ անոնք մըշտ կը պահանջեն կատարել երկրին ուսումնասիրութիւնը, հաւաքուած ըլլալով թէ առանց չարիքին արմատը գտնելու զայն ցամաքցնել անկարելի է: Եւ մեր պետութեան ներկայ աննախանձելի վիճակը առաջ եկած

է միտիայն բռնակալ ռեժիմ մը և անոր խիստ մօտաւոր ընդօրինակութիւնը եզոզ իբր թէ սահմանադրական ռեժիմ մը ղեկավարներուն մեր վերեւ թուած ճշմարտութեան հակառակ ըմբռնումին և ուղղութեան հետեւանքով: Անոնք կը փափաքին ամբողջ արիւնք կեդրոնացնել սրբախն մէջ և զրկել մարմինին միւս սահմանէրէ: այդ կենսական աւելչէն: Արդէնք: — Արդիւնքն այն եղաւ որ պետութիւնը ամբողջացնող միւս օրգանները — գաւառները — դադրեցան կենդանութեան նշոյցներ ցոյց տալէ և քիչ կը մնայ որ արեւան համախոտնումը յանկարծամա՛ր ընէ ամբողջ պետութիւնը: Երեք տարուան սահմանադրական կեանքի իրականութիւնը և ո՛չ մէկ կերպով կուզայ արդարացնել իր վրայ դրուած յոյսերը: Միչեւ հիմա շատ բաներու վրայ խօսուեցաւ ու գրուեցաւ, բայց շատ քիչ անգամ մեր խօսքին ու գրչին առարկայ դարձուցինք մեր մայր - երկիրը, գաւառները, որոնց ծոցին մէջ ունինք ապաստանած հայրենիքին հարազատ գաւառները, աշխատող բազուկները, ջրախնքի ախոյեանները, երջանկութեան գոյաբերողները, որոնց կեանքի կարիքները չառ ու չառ բազմապատկա՛նք պետութիւնը կը կարօտին: Եւ առանց այդ պահանջներու գոհացումին դեռ շատ տաքինիք ալ անխնդունակ պիտի դառնայ սահմանադրութիւնը իր փոփոխ, վերանորոգիչի դերը կատարելու մեր պետական կառավարական, ընկերական — հասարակական և կուլտուրական — կրթական և մանաւանդ տնտեսական կեանքերուն մէջ:

Ահա՛ թէ ի՞նչ պէտք է որ մեր ամենալուրջ ու շարժութեանը զարնուի: Իսկ արդ բոլորն մէջ գաւառի ձեռներեցութեան ոգին անհրաժեշտ է, գաւառացիինք պիտի մատնանիչ իր կարիքներն ու պէտքերը: Մայր — երկրին ծոցը բնակող բազմաչարչար ժողովրդեան թարա-

խոտ վերքերը, որպէսզի մեր նշգրահները գործածենք այդ փառխաները մաքրելու և ստեղծելու համար գաւառական երջանիկ կեանքը:

Գաւառը, որ բո՛ւնն օրրանն է աշխատաւոր ժողովուրդին, բա՛նն ու բրիչը, արօրն ու մանգաղը անոր աբխն — քրքրտինք աշխատութեան միակ գործիներն են, որ կ'աշխատի շարաշար և կ'ապրի կ'ստաքաղց, որ իր նալով վաստակը գրեթէ ամբողջութեամբ կը յանձնէ բորենինէրուն, որուն շինարար ձեռքերը կը չենցինն թագաւորներու պալատները, փաշաներու ապարանքները, որ իր անպարտեղի զօրութեամբ կ'ապահովէ Հայրենիքի կեանքը՝ իր արիւնովը կ'ոռագէ անոր

սուրբ հողը, ինք զրկուած է, մոռցուած է և կ'ապրի տգիտութեան ու խաւարի մէջ, կը նախասուռի, կ'արհամարհուի, որպէս թէ անպէտ տարր մը ըլլար ան: Ու այս զրկանքին, այս արհամարհանքին մէջ աւանաօգտակար ոյժերն են որ կը ջլատուին, ամենալինգունակ միտքերն են որ կը խամրին և հայրենիքը կը կարոնցնէ իր ամենաճարտար ու խելացի զաւակները:

Բայ արե՛ք գաւառացիին առջև ամէն ասպարէզ, լո՛յս տուէք, հա՛ց տուէք անոր ու ան պիտի փրկէ հայրենիքը: Տընտեսապէս բարեկարգեցէք զայն, նոսր սովորման է, մաքի բրէք, էյ իշխաններ, անոր կոչին, զի գաւառին օրասը պիտութեան մահն է:

ԱՐԳԱՄ ԳՆՈՒՆԻ

ՄԱՇԱԾ ԿՕՇԻԿԻՆ

A. C. Townsend

Կեանքի ճամբաներն հարք կամ առապար՝
Քեզ հետ ընթացանք միշտ ընկերաբար.
Դու ոսկիս ներհե՛ւ՝ պաղին ու սափն
Կասարեցիր պարսփոյ յար փութագին:

Ծածկեցիր ոսկերս որ չի փոշոսին
Եւ դերբուկներէն ալ չի յօշոսին.
Եղար ինձ ընկեր մը յաւեօ անգին՝
Հանոյիս ասեմ կամ աշխատանքին:

Իմ սոսիսներէս անգուր, անողո՛ւ՝
Շատ մը էարուածներ կրեցիր անբողո՛ւ.
Զիս պատշապանեցիր, բայց երբեք ինկած
Դայ, ամ ու ռիսի չի զարկիր ախաց:

Թարգմ. Գ. Յ. ԿԻԻԼԵԱՆ

Նոր եղած ասեմդ սեղմեցիր սակաւ,
Երբ չեիմ գիրար դեռ հասկըցեր լաւ.
Բայց հիմա ոսկիս յարմար ես աղուոր՝
Ինչպէս սիրական եղբայր մ'իր եղբոր:

Բայց ա՛լ կնեռոսած, եղած անպիսան,
Ա՛լ անկարելի դրնել կարկրսան.
Արդ եեզ կը նետեմ եզերքն ալն ճամբուն,
Յւր Բու օգնութեամբ փայլեր եմ համբուն:

Անշուշտ պիտի գայ օր կամ ժամանակ,
Երբ ա՛լ ծերացած, քառամած համակ՝
Զիս ալ պիտի՝ մեկդի նետեն Բեզ նրման՝
Անոնք որոնց ես եղայ օգնական:

Իցի՛ւ սեղն ըլլար Բովն արահետին
Վաստակի մ'ազնիւ, գործի մ'երկնային,
Յւրկէ անդադար անցնին ու դառնան
Զիս մաշողներուն ոսկերն անխափան:

ԲԱՆՈՐՈՒՅԻՆ

Արշալոյս է: Ամբողջ քաղաքը կը խոր-
դայ խաղաղ ու հանգարտիկ: Փափուկ
անկողիններու մէջ և քնքուշ բարձերուն
վրայ՝ բոլոր անանդ մարմինները ու գը-
լուխները մեղկօրէն կը հանգչին լուսա-
ծագի անուշ նինջով: Եւ միայն սա
բազդազուրկ ու թշուառ հարսն է որ,
աչքերուն մէջ քուն ու կկոցը ձեռքը,
միջնազի ստուերներուն հետ, կը շարժէ
անդադար, ու չըջարտուած մշտութիւն
թելերով՝ անդադար կը գործէ իր կեան-
քն գնովը՝ աչքերուն լոյսը թափելով և
կենդանի նախադասութեան մը կնիքը՝
անվերջանալի հիւսուած մշտութիւն ամէն
մէկ մասին վրայ, զրոյմելով: Կամայ
կամայ միջնազի կը պայծառի և անցորդ-
ներու ռաքերուն ձայները փողոցին մէջ
ու պատահաններուն տակ կը լսուին: Ա-
նոնք ալ թերեւ իրեն պէս դժբաղդներ
են, որ առտուան այդ պահուն՝ իրենց
բալդին Լաեւէն կը վազեն և կ'անիծեն
կեանքի այն ծանր բեռը՝ գոր կը տանին
դառնօրէն: մինչ անգին փափուկ անկո-
ղիններու մէջ և քնքուշ բարձերու վրայ՝
մեղկօրէն կը հանգչին բոլոր անանդ մար-
միններն ու զլուխները, որոնք մշիկ մշիկ
կը քնանան լուսածագի անուշ նինջով:

* *

Առաւօտ է: Կեանքը քաղքին փողոցնե-
րուն մէջ կը սկսի: մշնչեւ թանկութեան
հին կեանքը տակաւ կը հիւծի: Փոքրիկ
երախան օրօրոյն մէջ կ'արթննայ: ձիւ
մը, լայ մը, բայց անօդուտ: Դժբաղդ
մայրը, հագիւ կը լսէ որտաւտորին ձայ-
նը: Իր մէջ արթնած անօթութեան սև
դաղափարը կը լլկէ գինքը: Ու մայրա-
կան խանդակաթ սիրտը, անզգայ ու բիրտ
քար անտարբերութեամբ, անողոք՝ սի-
րահանը հանդէպ, կը հանդուրժէ մանկի-
կն որտաղին ճիչերուն: Իր մօր վիճա-
կն կարծես գիտակից՝ բոպէ մը վերջ կը

կարէ լացը, ու իբրեւ թէ կը քնանայ, աչ-
քերը կը փակէ պզտիկ մանուկը: Ասդին՝
բանւորունին պահ մը վար կը դնէ անիծ-
եալ կկոցը, ու հառաչ մը արձակելով,
գործասեղանին մէջ, աչքին տակէն աղուն
դէմքին կը հետեւի, որ բողբող բայց հա-
մակերպող արտայայտութիւն մը կ'առնէ,
քնդհանուր դալուկի մը սմոյն ներդաշ-
նակութիւնով: Խեղճ կինը, արցունքը
աչքին դարձեալ կը նետէ կկոցը մշտու-
թիւն թելերուն մէջէն որսալու համար
կարծես իր աղուն հայր՝ կեանքի գնով,
մինչդեռ օրօրոյն քով, քիչ մը հեռուն
իր էրիկն է որ կը խոկայ իրիկուան գի-
նովութեան բոլոր դարշանքովը:

* *

Կէս օր է արդէն: Բանւորունին բա-
ժինը չոր հաց մ'է միայն: — Իր մասնե-
րուն վատտակը: Պզտիկը, վիսիկի մը հետ
կը խաղայ անգիտակ՝ որ իրեն չափ դժ-
բաղդ՝ թշուառ յարկի մը բաժին ինկած
է: Դպրոցի տղաքը պատահանին առջեւ
էն կարգով կ'անցին, քիչ մը վերջ սե-
ղանին շուրջը բոլորուելու համար, երբ
առջին, իրենց համեղ ճաշը պիտի բլլայ
չոր հացն ու պապ Դուրը: Ու վայրկեան
չանցած՝ բանւորունին արդէն հոն է, գոր-
ծասեղանին մէջ, կկոցը ձեռքը՝ մշտութի
թելերուն մէջ որսալու համար կարծես
համեստ պարէնը, որ չի մեռցներ միայն
մայր մը ու երեխայ մը:

* *

Օրը կը տարաժամի: Վերջալոյսն քա-
ռւերներ կ'արձակէ: Ամէն տուն հայրի-
կին կ'ըսպառէ: Բանւորունին է միայն
սակայն, որ ոչ մէկուն կ'ըսպառէ, Տղան ալ
տարաբաղդ, Հօրը գալէն տարաբաժնի կը
սմքի տունին մօտ մէկ անկիւնը: Յան-
կարծ սեղի սեն է որ կը տարաժամի չորս-
դին: Դինով է հայրիկը: Եւ երբ ուրիշ
հայրեր կեանք կը բերեն իրենց հետ, խնդ-

ու երջանկութիւն, սա իր^ժհետ ունի կոխուանէ՞ծք, հայոցսնք ու ծեծ փետ, Բանաորուհին տակաւին, իր գործին վրայ է. կկոյր ձեռքը, գործառնողանին մէջ, մշտութի թելերուն նեղ անցքերուն մէջէն՝ որսալու համար կարծես համեստ պարէն մը, որ չոր հաց է միայն:

* *

Գիշեր ու ցերեկ, ամառ թէ ձմեռ, հոն է նէ, պատուհանին առջև, կկոյր ձեռքը, արցունքը աչքին, եւ անէծք մը շրթնեքուն վրայ: Թէ արեւը գայ զինք ողջու-

Մարգարան

նել, և կամ ձմեռուան արհաւիրքը սարսրեացնէ իր նիւար մարմինը, նէ ոյժ մը կ'զգայ տակաւին իր մէջ, կեանքի հարուածին սովալու ու բաղդին անդթու. թեան կուրծք աւալու: Ղփաղղ մայրիկն է նէ, մանաւանդ Ղփաղղ ամուսինը, որ կկոյրն ու թելերուն հետ կեանք մը ամբողջ կ'անցնէ, — կեանք մը սաժանելի ու կեանք մը ցաւալի: Բանաորուհին է նէ, թշուառներու մէկ տիպարը, որ կեանքի դառնութիւններուն մէջ, երջանկութեան երազովն միայն կ'ապրի:

Գ. ՕՋԱՆԵԱՆ

ԳԱՒԱՌԻ ԶԱՅՆԸ

Ինձ յայտնի չէ տակաւին այն յատկագիծը, որուն վրայ պիտի բարձրանայ Աւնախա գաւառաթերթին կերտուածքը, բայց կր կարծեմ թէ մօտաւորապէս հետեւող ուղղութիւնը պէտքէ ունենայ ան. — իմբարդութիւնը լաւագոյն անօրինութիւն մը բրած կ'ըլլայ եթէ թերթին իրական կեանքի արտայայտութիւնը տայ, պատկերացնելով անոր մէջ կեանքի այնպէս, ինչպէս որ է Ամասիոյ և Փոքր Հայքի մէջ: Ինչպէս բովանդակ թուրքիա, այդպէս և մասնաւորապէս Փոքր Հայքը ուսումնասիրութեան տեսակէտով կուտական երկիր մը կը ներկայանայ: Անհրաժեշտ է որոշ նախազօծով ձեռնարկել գործի և ամենայն հարազատութեամբ տալ շրջանին և տեղին շփոյցեղային, ազգային, քաղաքական, կրթական, լեզւանուր մը շտկութային (կուլտուրական) և մանաւանդ անտեսական կեանքին պատկերը: Ուսումնասիրութիւնները որքան ճշգրիտ ըլլան ու բոլորին բուն իսկ իրականութենէն, այնքան կը բարձրանայ անոնց արժէքը: Չմոռնանք միեւնոյն բանն ըսել նաեւ կուտակողական կեանքի մասին:

Այս ուղղութեամբ առաջնորդուող թերթ մը նախ և՛ առաջ գեղեցիկ օրինակ մը կը

հանդիսանայ գաւառական մի շարք տրեգոյն անիմատ ու անօգուտ հրատարակութեանց ու պարբերականներուն առջև: Յուժեղ տա միւսող գաւառական մատուրական ուժերն աճողին ծառայութիւն պիտի կրնային մատուցանել բնաշխարհին ու ժողովուրդին, իսպառ հրաժարելով այն բոլոր նիւթերէն, որոնք չեն կրեր բնատոհմիկ դրոշմ ու հեռու են միջավայրն արտայայտելէ: Ասով մէկտեղ չեմ ուղեր ըսել թէ Աւնախան կարող է և պէտք է զառնայ ազգագրական (Ethnographique) թերթ մը, ո՛չ: Որոշ սխեմակ կրնայ յատկացուիլ այդ ճիւղին, առնելով զայն իր բնդհանուր գծերուն մէջ, առանց երկրորդական ու անկարեւոր մանրամասնութեանց իջնելու:

Մօտենայ բոլոր ինդիւստրիան ֆինանսն հայեացքով, բացասականը մասնանշելէ ու ձաղկելէ յետոյ դնելով անոր քով դրականը, ցանկալին և այնպիսով մէկ կողմէն միջոց ծառայել շատարակութեան ճանաչալու իր թերութիւնները և միւս կողմէն առաջնորդել զայն դէպի հանրագուտը, դէպի կատարեալը: Բացատրել երեւոյթները իրենց ծնող պատճառներով և մղել ժողովուրդը դէպի հետեւողական

(systématique) աշխատանք, այդ աշխատանքի մէջ յոյս տալով՝ ամէն ցաւի դարմանն ու ամէն յաջողութեան գաղտնիքը:

Մասնաւոր ուշադրութիւն դարձնել ընկերային հարցերուն, տեղն ու տեղը և հանգամանօրէն պատկերայնելով ազգաբնակչութեան աշխատանքի խաւերն ու դասակարգային շերտաւորումները: Այդ շերտաւորումներու օրրոտօրէական բարեշրջումները (Evolution), անոնց յաջորդական փոփոխութիւնները, կրած բոլոր փոփոխութիւնները: Աշխատաւորութեան ընդհանրապէս և օրավարձով աշխատող գործաւորութեան մասնաւորապէս՝ կեանքը տալ իր բովանդակութեամբ, ամենամեծ խնամքով նշանակելով անոր կազմակերպական ձգտումներն ու անտեսական շարժումները:

Չարաբաստիկ հոգային հարցը շօշափող ամեն խնդիր և երեւոյթ իր առանձին շահահանութիւնն ունի, ուստի և պէտք է աստիճանագրութիւն և հիմունք ծառայեն լուրջ հետազոտութեան: Ստուգուած է որ յաճախ Պատրիարքարաններ և հովիւ կազմակերպութիւններ իրենց անվերջ բանտնայութիւններով ու քաղցիւններով աւելի քիչ նպատակի են ծառայած, քան

գաւառութեան հաշորդած այս կամ այն անցքը, այս կամ այն իրողութիւնը, որ կ'արտայայտուի օրով, թուականով, տեղով, դէմքերով ու թուանշաններով: Այս քան մեծ է իր կոման գիտակից գաւառութեան մը նշանակութիւնը, երբ զայն վարողները գիտեն գործնական կեանքին հետ կապել իրենց աշխատանքը:

Յարաբերական խնդիրներու մասին ալ կարելի է, նոյն բանն ըսել, միայն այս կէտին մէջ աւելի զգոյշ ըլլալու է, որ պէտքի ան ճշտ հրատարակութիւններով տեղի չի ստուին ամբողջային յազմումներու և համեմատական խաղաղութեան խանգարման:

Կարծեմ, ես կարողացայ քանի մը տողերով գծել մօտաւորապէս այն ուղղութիւնը, որու շնորիւ Անապիս կրնար գոյութեան իրաւունք ստանալ իրմէ առաջ երեւցած պաշտօնակիցներուն մէջ:

Կ'սպասենք, ուրեմն, որ Անապիս բառին բովանդակ առումովը ըլլայ գաւառին ձայնը և կարողանայ լսելի ընել այդ ձայնը բոլոր անոնց, որոնք աչք ունին ու չեն տեսներ և ականջ ունին ու չեն լսեր:

ՀՄԱՅԵԱԿ ԱՐԱՄԵԱՆՑ

ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆՆԵՐԸ

(ՆԵՐԱԾՈՒՄ)

Ես միև ի մահ, կախաղան
Միևսեւ անարգ մահու սիւն՝
Պիտի գողան, պիտի՝ կրկենեմ,
Անդադար—Ապաստութիւն:
Միևսեւ Նալբանդեանց

Աշխարհ թատերադահմ մըն է, և մեծ մարդիկ անոր դերակատարները: Բայց պատմութեան էջերը, եթէ կ'ուզէք երթալ այդ խորհրդաւոր թատերադահմին առջև ու տեսնել անոր վրայ ներկայացուած հոգեւորական տաղաները — պայծառ ու տըխուր պատկերները մարդկային կեանքին: Բայց՝ այդ արիւնտներկ մատենին

կարմիր էջերը, եթէ կ'ուզէք դիտել այդ ընդհանրական թատերադահմին վրայ գործող դերակատարներուն գովելի ճարպիկութիւնները, անոնց հիմնադր քաջագործութիւններն ու քստմեղեցիկ վայրագութիւնները: Գացէ՛ք այդ մեծ թատերադահմին առջև ու հիացէ՛ք կամ գարշեցէ՛ք, խնդացէ՛ք կամ լացէ՛ք, կրակ կը

տրեցէ՛ք կամ վհատեցէ՛ք, բաւական է որ հոն ձեր անկեղծ սիրտը բանաւ ու եռակեղծ լինէր յաստի քաղերու ճարտարութիւնն ու նենաք, բաւական է որ հոն իրապէս ազդուելու և յեղափոխուելու գիտակցութիւնը ցոյց տաք, և այդպէս կեանքը, գոյութեան պայքարը իր պատմագիտական սրուշ հիմերուն վրայ դնէք, ազգովին թէ անհատապէս:

Պատմութիւնը հետեալաբար մեզի համար կը դառնայ ուսում մը կենսական ու պիւկանի, այս՝ գիտութիւն մը՝ որուն պէտքը հրամայողական կը նկատուի մանաւանդ արտիստ տաղանդաւորից ու նշանաւորից վայելչաներուն մէջ, քաղաքական ու անաստական այս օրինակ երեսթիւնը չըջանի, որոնցմով պիտակաւորուած է Օսմ. Հարկներէն արիզներ բնդհանրապէս, և Հայ ազգին ամպրտ կամարը մասնաւորապէս:

Հետեւինք ուրեմն պատմութեան:

Մարդ էակը իր գոյութեան նախնական շրջաններուն մէջ կ'ապրէր խիստ գոնուհակ ու խիստ հաճելի կերպով, որովհետեւ կեանքը այն ատեն շատ պարզուկ ու համեմատուկ էր. կրօնական, խնայական, փաղաքական ու քաղաքական կենսական խորհումներ չէին նախապետական մարդուն պայծառ ճակատը. գիտութիւն, գրամ, իշխանութիւն, ելն, անպէտ բաներ էին անոր համար: Անմեղունակ այդ կեանքը ասիայն նոյնը չի մնաց. բարդութիւններ ստեղծուեցան. պահ մը առաջ իրարու հարազատ, սիրալիր ու անկեղծ էակները մարդկային, այժմ սկսան խորդանալ, գիտուիլ ու պայքարներ մը զիլ իրարու հանդէպ. վասնզի երկու հաւկառակ տարրեր, երկու դատակարգեր այժմ դէմ դիմաց կանգնած էին չորս աշխարհներուն մէջ ալ: Կրօնական աշ-

(շարունակելի)

խարհին մէջ՝ քաննան ժողովուրդն դէմ, իմացականին մէջ՝ դիտուելու ազգական դէմ, քաղաքականին մէջ՝ սիրալիր տաղը սարուկին դէմ և անաստական աշխարհին մէջ՝ հարստանալու հարստանալու դէմ, շահագործողը շահագործուողին դէմ: Պայքարը, բաղխումը անխուսափելի էր:

Ուժ մը պէտք էր այդ հակոնդդէմ տարրերը հաշտեցնող, զանաք իրարու մօտ բերող. զօրութիւն մը պէտք էր անոնց անհամեմատ դէրժները ճշդող, պարտականութեան զանգակը հնչեցնող: Եւ այդ ուժը արդէն բնառու էր մարդուն համար, բաւական էր որ շարժառիթ մը, դրդապատճառ մը գար, զայն իր փրկարար դերին մէջ զննու, իր շինարար գործունէութեան բարձրագոյն կէտը համար, բաւական էր որ մարդ անհատը իրապէս գիտակցած ըլլար իր մէջ թագնուած այդ հսկայ կարողութեան. ան, այն ատեն հրաշքներ, և մրայն հրաշքներ պիտի ծրնէր ան, ինչպէս ծնէր են մեծ մարդիկը մեծ աշխարհներուն մէջ:

Բայց ինչ է այդ ուժը, այդ հզոր ազդակը, որուն կարծես միշտ օգնութեան է գիմեր մարդ՝ իր անուապանքի միտառութեան օրերուն մէջ. ինչ է այդ զօրութիւնը, որուն ազդեցութիւնը ա՛յնքան զօրեղ, անքան մեծ ու անջնջելի է դարձեր մարդկային անշուշտ ու ներկայ իրականութեան մէջ, և թերեւ նոյն շարունակէ ապագային ալ. — Յեղափոխութիւնն է ան, այս՝ Յեղափոխութիւնը, որուն արիւնքները դրօշը ծածանած է հոն, ուր տառապանք կար, հոն՝ ուր ազգայնութիւն ու մղկեղանդութիւն կը զանուէին, վերջապէս հոն՝ ուր կեղեքում ու բռնակալութիւն կը տիրէին:

ԹԱԴԵՈՍ ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԳԱՒԱՌԻ ԿԵԱՆՔԷՆ

ԼՍԱՐԱՆՆԵՐ

Ամսոյս 16ին Կիւրակի օր Ս. Դ. Հըն-
չակեաններու լեմէն բանախօսեց Միւ-
թէսարըֆ Ահմէտ Մաճիտ պէյ «Պարտակա-
նութիւնը» նիւթին վրայ: Ընկերային ու
բարոյական սեռակէտներով լաւ դասա-
ւորումով մը նկարագրեց ապրող անհա-
տէն կեանքի ընթացքին ունենալիք պար-
տաւորութեան գիծերը: Մէկուկէս ժամ
սեղանութեամբ օգտակար բանախօսութիւն
էն էր:

Դարձեալ ամսոյս 26ին Դ. Իրիկունը
«Բօսիա» ապառքաւորական ընկերութեան
գործերով քաղաքս այցելող Տեար Տիգ-
րան Թօսպաթեան ծանօթ գէմքը բանա-
խօսեց թուրքերէն լեզուով «Մեր գիւղա-
ցիներուն ցաւերն ու անոնց դարմաննե-
րը» նիւթին վրայ: Զգայուն լեզուով
մը պատկերացուց գիւղական աննախան-
ձելի վիճակն և անոնց դարմանման
գործնական միջոցները: Իր զգացումնե-
րը շնորհաւորելի և գաղափարները գնա-
հատելի էին:

ԱԴԵԻՏՐԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Նախորդ թիւով ծանուցուածին համա-
ձայն ամսոյս 21ին տեղի ունեցաւ տեղ-
ւոյս տարեկան տօնավաճառը երեք օր-
ուան տևողութեամբ: Հրատապ հանգա-
մանք մը չունենալով խիստ թոյլ վիճակ
մ'ուներ:

Առևտրական հրապարակը նախկին կա-
յունութիւնը կը շարունակէ:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔ

Ազգային կեանքի մէջ որոշ գործու-
նէութիւն մը չկալ: Ս. Առաջնորդը թե-
մական գործերով Մարզուան կը գտնուի:

Ժէզուիթներու վարժարանէն գործա-
դուլով հրաժարող ուսուցիչներ գրու-
թիւնով մը կը յայտնեն թէ իրենց հրա-
ժարման պատճառը «Ապառաժ»ի բռածին

պէս ո՛չ միայն այդ հաստատութեան մէջ
տիրող բռնութիւնն է, այլ նաեւ ուրիշ
նիւթական ու բարոյական լուրջ պատ-
ճառներ գոյութիւն ունին:

ՊԱՏԱՍԽԱՆ

ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՅՕ ՍԵՊՏ.

327 ԹՈՒԱԿԱՆԱԻ ՇԵՌԱԳՐԻՆ

«Առողջապահական փոքր սպաներու
գպրոց» անունով մօտերս բացուելիք
գպրոցին աշակերտ արձանագրուել և ըն-
դունուել փափաքողները հետագայ պայ-
մանները պէտք է լրացնեն:

1.— Օսմանեան հպատակ պէտք է լի-
նին: 2.— Րեշիդի վկայական պէտք է
ունենան կամ անոր հաւասար կրթութիւն
առած պէտք է ըլլան: 3.— Իրենց տա-
րիքը 18ի և 30ի միջև պէտք է լինի:
4.— Մարմինով առողջ պէտք է ըլլան:
5.— Մաքուր վարք ու բարքի տէր
լինելու են: Նաեւ Առողջապահական Խոր-
հրդոյ զեկուցման վրայ կը ծանուցուի
թէ գպրոցին շրջանը երկու տարի պիտի
լինի:

Մարզուանի մեր թղթակիցը Աւեսունի
կ'ըմացնէ թէ նորընտիր Երեսփոխանական
ժողովը եռանդուն գործունէութեան ըս-
կսելով՝ առաջին առթիւ Եզեկիէլեան կա-
րապետի շահադիտական գրգռմանքէն
Հովզացիներու՝ Մարզուանցիներու սեփա-
կան պանդոկին իւրացման հոմար հարու-
ցած խնդիրը կարգադրած է, երկուստեք
համաձայնութեան բերելով և Եզեկիէ-
լեանի նենգոտ ու շահամոլ սգին երեան
հանելով:

Արսօնսկր՝ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՎԻՊԵԱՆ

Խնքագրապէ՝ ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ

Տպ. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԸՄԵԱՆ

صامسوندن یوله چیقان بالجه یولجیلری کال
جسارتله صومشدر . آشبو اشقیه لر یولجیلرک
اللی یوز لیرا مقدرنده نقد اچهلرینی ساحتلرینی
و بر چوق سلاهلرینی غصب ایتشلر . شو
زمانده اناطولینک دیکر طرفلرنده دخی چاقر .
جهلیلر ظهوری ارزو ایدلمدیکندن حکومتک
یقین کونده متجاسرلری دردست ایتسنه متظرار

سجائمز متصرفی سعادتلو احمد ماجد بک
افندی ماه حالک اون التیسنه مصادف بازار کو .
نی هنجاقیان قلوبنده اخلاقی و اجتماعی برقوقفر .
انس ویردی ، ماده سی «وظیفه» اولوب انسانک
کندی نفسنه . اشیایه ، وطنه قارشو اولان وظا
ئفی بک منطقی ادله و غایت اچیق بر لسانله تعداد
ایلدی . قلوب سامعون ابله خنجباخنچ طولو
ایدی . سامعون احمد ماجد بک افندی بی آقشلا
یهرق بر تاثیر مستحسنه التنده اولرینه عودت ایتدیلر

اماسیه متصرفلی حضور عالیسنه

آچیق معروضات

منحل اولان کش حاجیکویی قرا کتسابی
ایچون بلا امتحان بر دیکرینک قایرلمسی استخبار
اولمش و مستحقیندن بری طرفندن مسابقه امتحان
نی اجراسی حقهده واقع اولان مراجعت نظر
اهمیه التامشدر حالبوکه مقام حکومت و قوعبولان
هرهانکی بر مراجعت حکومتک نظر رافت و عدا
لتندن دور اولماق لازمکله جکندن صاحب مرا
جعتک هر حالده بر جوابه حق قانونیسی وار در .
ناءعلیه بوبابده کی حقیقتک میدان علنیه وضعی

رجاسنه جرات ایلرم فرمان

۰۰۰

۳۰ ل تشرین اول سنه ۳۲۷

بخالصه صداقتکاری و وطنپروری بشقهجه شد
یان تجیل و تشکر همتلردن بولمشدر . مقصدک
علویت و اهمیتی دربار و جمله طرفندن بو بابده
اراز آتار سماحت و معاونت ایدبله جکی
پدیدار بولمغله کیفیت انظار حمیه وضع اولنور .
سا ۱۹ تشرین اول سنه ۳۲۷ آماسیه متصرفی
احمد ماجد

* *

کوچک صحیه ضابط مکبی نامیه یقینه
کشاد ایدبله جک مکبه قید و قبول ارزوسنده
بولنالرک اول امرده عثمانلی تبعه سندن و ثانیاً
رشدیه شهادتنامه سنی و یاخود اول قدر تحصیلی
حائز و ثالثاً سنک اون سکر ایله اوتوز ارا .
سنده و رابعاً سالم الوجود و خامساً ارباب عفت
و استقامتدن اولملرینک ده مشروط ایدوکی و
مدت تحصیلک ایکی سنه اولدینی مجلس افاده
سیله معروضدر .

اماسیه غزنه سنه

مجلس طیه ملکیه و صحیه عمومیه ریاستی
وکالتک ۲۵ ایلول سنه ۳۲۷ تاریخ و ایکبوز
اون طقوز نومرولی تحریرات جوابیه سی صو
رتی غزنه کزله اعلان اولمق اوزره بالایه نقل
تبلیغ اولنور سا ۱۹ تشرین اول سنه ۳۲۷

اماسیه متصرفی

احمد ماجد

* *

صامسو ابله بچقاللی اراسنده محمور طاعی
اوزرنده ماه حالک ۲۳ نجی بازار کونی یدی
تفردن عبارت بر اشقیای چته سی اول کون

مسعودی ملاسه سیله اجرا قلنان مراسمی حا-
وی داخلیه نظارت جلیله سنه کشیده اولنان
تلفرافنامه ایله نظارت مشارالیه یسادن بو کره
شرفورود ۱۱ تشرین اول سنه ۳۲۷ تاریخ
تحریرات علیه صورتلری غزته کره درج اولمق
اوزره بالایه نقل اولمشدر .

۱۹ تشرین اول سنه ۳۲۷ اماسیه متصرفی
احمد ماجد

اماسیه غزته سنه

سوکلی دونمازک تقویه سی مقصدیله فداکار
کش حاجی کوبی اهایسی دوت سنه ده تأدیبه
ایلمک اوزره مکلفیت سنویلرینک بر مثالی دونما
اعانه سی اوله رق تعهد ایستدیلر و شو صورتله
حیت فطره لرین اثبات ایلدیلر حسیات عالیجناد
بانه ایله مفظور و بو خصصات و طنپرورسی تا
ریخاً دخی مشهور اولان اهایلمزک دونما اعا
نه سنده کوستردیکی مأثر غیرت و همه پک پار
لاق بر مثال تشکیل ایدن اشبو تکلیف و اشعار
مع التقدير ولایته عرض و ازبار ابدلیدیکی کبی
کیفیت تعمیماً مالحقاته و سائر ایجاب ایدنلره
دخی تبلیغ قلنمش و ملک و ملنک ترقی و تعا
لیسیله سعادت آئیه سی تأمین ایدمچک و سا
ئل و نکالیفی قبول ایتکله مقتخر بولنان اماسیه
عثمانی اتحاد و ترقی تلویجده بو خصوص نظر
اهمیته النهرق تکلیف واقعه نموناً اشراک ایدان
و بش سنه مدته افراد جمعیت طرفدن املاک
و تمتع ویرکوسنسک بر مثالی ضم ایله تسویه سی
درعهده اولمق صورتیله ابراز اولنان تظاهرات

*
*
مشروطیپروور پادشاهمزک ولادت سنیه جناب
خلافتیناهیلرینه شرفصادف اولان اشبو روزفیرو-
زک علوشانی اماسیه ده اک صمیمی تظاهرات
صدائقکاری ارائه سی صورتیله توقیر و تحیل و
ذات شاهانه نک تمادی عمر و عافیت هایونلرینه
و قوای حریه عثمانیه نک مظهر نصرت الهیه
اولسنه و سلامت ملییه دایر پک سوزشلی
دعالم وطن پرستانه نقطلر ایراد ایدیلرک غوائل
حاضره نک حسن موفقیت و مظفریتله نتیجه پذیر
اولسی تضرعات مخصوصه سی ابصال بارگاه رب
جلیل اولندی . بو مناسبتله بلا تقریق جنس و
مذهب عموم عثمانیلر طرفدن اظهار قلنان
تحسینات و طنپرووراننک تصور ماهیات و درجا
تی جداً مستحیل اولوب دولت و ملتیزک مح
فظه شرف و شوکتی و تمامیت ملیکیه سی ایچون
عموم لوا خلقی یکدل و یکوجود اولدینی حالده
متحداً ابراز فداکاری به حاضر و حکومتک
امرینه مهیا و منتظر بوللدیقنه دایر تأیید عهد
و میثاق ایدیلرک بو عزم و قرار خالصانه نک
عرض لسان عمومیدن درمیان قلندیدینی
معروضدر .

ولادت هایون جناب پادشاهی یوم مسعودی
ملاسه سیله اجرا قلنان مراسمی حاکی تلفرافنامه
والالری لدی العرض منظور عالی و موجب
مخوظیت حضرت جهانبانی اولدینی شرفورود
تذکره سامیه ده ازبار اولمقله اولاباده .

اماسیه غزته سی مدیریتته

ولادت هایون حضرت خلافتیناهی یوم

صر مشترك و متحد اوله بيلسون . يعنى اوليه بر شكل حكومته واصل اوله بيلملى كه عناصر مختلفه
عثمانيه بو طرز اداره ايله رفاه و نجاتيني ، سعادت و استراحتي تأمين ايده بيلسون (حاكميت مليه)
معناسز بر تعبيردن عبارت قالمسونده بتون قوت و معناسيله تطبيق اولنسون ...
اتحاد و امتزاج ديوب كيديورز . فقط بو اتحاد و امتزاج نه كي شرائط التنده قابيل
ولديغى تدقيق و تحليل اتمك زحمتي بيله اختيار ايتيورز . صانيورز كه عناصر مختلفه عثمانيه
هايدى بزم ديديكمز كي كليكرده بر اشكر و بز نه ديرسهك سس چيقارميكز ، همان قبول ايدى
ويريكز ، ديجه اونلرده سرفروورده اطاعت و انقياد اوله چقلر . اتحاد ايدى ويره جكر ...
بو صورت حركت نه وقت التزام ايديلور ؟ (مابعدى وار) م . ر

خالى طوقويان فقير قيز

چوقدن اريدى ملك وجودك
ايلدى سى بويله جه مغموم .

طوقو خالكي قيزم ! چاره يوق
زنكنيك صالونى زينت ايستر ،
يارهلى جكر يكه درمان يوق
كيسه لر آتونه طولق ايستر .

او كسورمه قيزم ! طوقو خالكي !
اجيمازلر جكر قوبسه ده .
اغلامه قيزم ! اونوت خالكي !
آكازلر سى جانك چيقسه ده .

او كسورمه قيزم ! خالى يى طوقو !
سن دنيايه قربان ايچون كلذك ،
كيرمسون اصلا كوزيكه اويغو !
سن دنيايه زنكن ايچون كلذك .

مرآت

يچون كوزلرك ياشارمش درتلى قيز ؟
دروكده يوقسه بر سرمى وار ؟
دستگاه اوكنده بويله جه ايشمز
طورمغه سنك سيكى وار ؟

كل ياناقلرك صاراروب صولمش
جكر قوبسه يارهلى مى در ؟
كوزلرك سنك قانه بوياغش
كيجه لرى عجب اويقوسز مى در ؟

بيليرم ! اون بش ساعت كونده
سن طور مقسزين خالى طوقورسك ،
يووا ياغش ورم جكر كده
چونكه بودنياده سن فقيرسك

ويرمدى زنكن اصل اجرتك
دئما اولذك غدادن محروم ،

اصلاحات وسیله سبیل مداخلات وار . ائی بیللمی که اوروپانک اصلاحات حقیده مطالعیه مدا . خلاقی ، ممالک عثمانیه ده ملت حاکمه اولان ترکارک عناصر سائیده ، تبعه غیر مسلمیه عدالت و مساوات اوزره معامله ده بولمیه رق کنیدیلمی امتیازلی عد ایتلمی و اونلری تحکم و تضییق آلتیده بولندرملمی اساسنه استناداً ، وقوع بولیوردی . اوروپا افکار عمومییه سی بو اساسی قبول ایدیوردی .

اوروپا دولتلرندن هر برینک شرقده منافع مخصوصه سی و بو منافع ترویج و تقویدی تقویه توسیع ایچون آیری بر مسالک سیاسی وار . ممالک عثمانیه ده ملی غیر مسلمه نک حمایه سی کی بر نظریه التنده امل سیاسییه نک ترویج ایلمی ، مالی غیر مسلمه نک بو آماله الت ایلمی ده واقعه سی .

ترک عناصر برینک عیری ملتله کلنجه بولنر ابقای موجودیت قیدیه کاه بر تأثیر خارجییه استناد ایدیورلر . کاه کنیدی کنیدیلمی مدافعه ایچون بر عزم ملی کوستریورلردی . حکومت مستبده عمومیتله عثمانیلرک حق و حریتی غضب ایتدیکی کی عناصر عثمانیه اراسنده شکل اداره سبیله تفاه صاچیوردی .

بشقه مثال ارامه دن ، اعلان حریتدن بران اولکی ماکدونیا احواله . بقالم ! ... بو کون ممالک عثمانیه ده عثمانی نامی التنده ملل مختلفه متمکدر ، بولردن هر برینک ملیت و موجودیتی وار . اگر بو ملت و موجودیت ضرر ویرمک یولی طوتولور ایسه هیچ بر زمن اتحاد قابل اوله ماز . هر ملتک تمایلات و احتیاجات قومییه سنه رعایت ایدرک و حرمت کوستره رک بر وطنک مدافعه سی و توایسی نقطه سندن بر اتحاد سیاسی حصوله کتورمکه چالشمق لازم در . ایشته بواحد ملته ، حکومت قومییتی تأمین ایده جکدی ، بو بولده بر اتحاد ایسه الحق خلق اراسنده بر رابطه حاصل اتمک و جمله سی بقا و موجودیتلری تأمین ایده جک بر نقطه ده جمع ایلکله ممکن اوله جقدی .

ساده بر منطق ایله حقیقی آرایلم . عناصر مختلفه عثمانیه اراسنده نصل اتحاد حاصل اوله ییلر ؟

بو کون حریت و مساوات و اخوت قاعده سی تأسیس ایدوبده بو قاعده داخلده حرکت قرار ویرنجه ، یعنی حاکمیت ملیه اساسی قبول ایدنجه ارتق ترک عناصری چوقدر و بیلدیکی یابار . عربلر بویله ! ارمنیلر شویله در . روملر شو حسیاته تابع در . فلان کی مفرورانه حکمتلردن واز کچمیدر . حاکمیت ملیه ، بزم کی مختلف عناصرلردن مرکب بر ملتده بویله تطبیق ایدیه من . حاکمیت ملیه ده اوله بر منفعت بوللی که بو منفعتده عثمانی نامی طاشیان بتون عنا .

امانتیه

طشمره منادیسی

نومرو ۲

یشرین اول ۳۰ سنه ۳۲۷

برنجی سنه

عثمانیلرک قوتی ، وطنک سلامتی

بکن سنه لردن یعنی اون تموز انقلابی انتاج ایدن مجاهده حریتدن تفضلاً بحشه - بوزده - لزوم کورمیز ، یالکز قانون اساسینک اعلاقی ، حق و حریت ملنک استردادی اور- زرنه حکومت عثمانیه کی عناصر مختلفه نك وضعیتدن بر نبذه بحث ایده جکر .

اون تموز انقلابی اوروپاده آقشیرله ، تقدیرلرله تلقی اولندی . عثمانیلرک موفقیتی ، یالکز عثمانی وطنی ایچون دکل ، بتون انسانیت ایچون بر نعمت مقامنده کورلدی ، محب حریت و ترقی اولان ذواتک کافه سی بو انقلابی کمال ممنوینتله سلاملادی .

عثمانی مجاهدلرینک تعقیب ایتدکری ، استحصاله چالشدقلمری مقصد . عالی ایدی . حق و حریت بشرک ، بد استبداددن تخلیصی ... بو مقصدی اوغرنده اوروپا اقوام مختلفه سنده نیجه قیاملر ، حرکتلر ، اختلالر وقوعبولمش ، بر چوق قانلر دوکولمشدر .

عثمانیلرک مقصدیه ، وصحائف تاریخی ، انسانیتک اک مهم وقوعاتندن اوله رق املا ایدن حرکات اختلالیه حریت پروراننک مقصدی اراسنده قرق یوق . انجق عثمانیلر بو مقصده عالی برهمنله ، عصر حاضر مدنیتنه لایق بر حکمتله واصل اولمشلردر .

استحصال حق و حریت بشرده ، دائماً ارتجاع طرفده کوريله گلش اولان اردو ، عثمانیلرده مجاهدین حریته پیشوا اولمشیدی .

ایشته عثمانی انقلابی بو نقطه نظرندن تاریخ عالم وقوعاتنده بر مستثنا تشکیل ایتمشیدی . بو جهتده اوروپانک حیرتی موجب اولدی . فقط انقلاب اوروپایه قارشو مهم بر صفحه ده کوسترمشدی .

کلخانه خط هایونشدن بری اوروپانک حکومت عثمانیه دن انتظار ایتدیکی اصلاحات وار ،

ՍՏԱՅՈՒԱՆ ԴՐՔԵՐ

Քնար Երզրանուքեան. — Հայ առաքելական Ս. եկեղեցւոյ: պատրաստեց՝ Կրօնիդէս Քնյ. Նալբանդեան: Տէր և հրատարակիչ Աղեքսանդր Եղգատեան: Տպ. Կիւթէմպէրկ Մարգուան 1911: Գին 7 դր: Բօստ. ծախք 30 փրյ: Եկեղեցւոյ Երաժիշտ մանուկները համար կարեւոր պահանջներ կը լրացնէ:

6. — Հայաստանի Ոգին. — Միջրան Իսպիրեանի (Վրոյ): Հետաքրքրական հատորիկ մը: Կարժէ կարգալ: Տպ. Կիւթէմպէրկ Մարգուան. էջ 32 գին 60 փրյ: Դիմել Ակինեան կամ Լուսաքեր գրատունները — Սերաստիա:

ՆՈՐ ԱՅԳ

ԱՄՍԱԹԵՐԹ Գիտական, Քաղաքական, Պատմական, Գրական, Խմբագրուպեա՝ Բրօֆ. Յ. ՄԱՆԻՍԱՅԵԱՆ Արտօնատէր՝ » Գ. Յ. ԿԻԼԵԱՆ Տպագրութ. ՆԵՐՍՍ և ՄՐԱՊԵԱՆ Մարգուան:

Բաժնեգին՝ Տարեկան 20 դր:

Հասցէ՝

ՄԱՐԶՈՒԱՆ ԱՆԱԹՈՂԻԱ ԳՈՂԷՃ ԽՄԲ. ՆՈՐ ԱՅԳԻ:

ՀԱՅԿՈՒՆԻ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԳԷՍ ՆՁՐԱՀԱՄԵՐՈՒ Խմբագրուպեա՝ ԳԱԳԻԿ ՕԶԱՆԵԱՆ Արտօնատէր՝ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԼՏԵԱՆ Բաժնեգին՝ տարեկան 15 դր: Հասցէ՝ ԽՄԲ. ՀԱՅԿԱԻՆԻ ՄԱՐԶՈՒԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ — ԳՊՐՈՅԱԿԱՆ

Պատասխանաւ Խմբագիր՝ ԱՆՏ. ԳԸՈՒԱՆԿԸՅԱՆ

Արտօնատէր՝ ԺՕՋԷՖ ԳԱՍԱՊԵԱՆ

Բաժնեգին՝ տարեկան 12 դր:

Հասցէ՝

ԲԱՆԿԱԼԹԻ ՊԵԿՅԻ ՓՈՂՈՅ ԽՄԲ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ Կ. ՊՈԼԻՍ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ ԱՄԱՍԻԱ

Ոսկի գործուն եւ պրիճ նաեւ սեշիւ-րոյս արհեստական ասամներ շինելու Ամերիկեան մեքօսք սորվիլ ուզող բոլոր ասամնաբոյժներու կը յայտարարէ թէ ինք պատրաստ է այդ մեքօսք սորվեցնել նպաստաւոր պայմաններով:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՍԻՍՈՆ ՖԱՐԸԽԵԱՆ ԱՄԱՍԻԱ

Կը կատարէ՝ կեանքի եւ հրդեհի ապահովագրութիւններ նպաստաւոր պայմաններով:

ՆԵՐԱԶՅԱՑՈՒՑԻՉ Է

Կեանքի՝ ԼԱ ՆԻԻԵՕԻՔ Ընկերութեան եւ հրդեհի՝

ԼԱ ԼԻՊԵՐԱԼ

Ձրանաական ընկերութեան

ԹՈՒՐՔԵՐԵՆ ՍՈՐՎԻԼ ՈՒԶՈՂՆԵՐՈՒՆ

Այդ լեզուին ծանօթ ուսուցիչ մը տրամադիր է նպաստաւոր պայմաններով այդ լեզուն քիչ ժամանակի մէջ սորվեցնել իր այցելու դասախօսութիւններով: Զինուորացուներն եւ պետական վարժարան մտնելու մտադիր եղողները առիթ է թող օգտուին անմիջապէս: Պայմաններուն տեղեկանալու համար պէտք է դիմել Խմբագրութեան:

Մօտու հեռու բարեկամներուն կը յայտարարենք թէ մեր քղթակցութիւնները՝ յառաջիկայ Նոյեմբերէն սկսեալ ուղուելու են՝ Վէզիր Բէօփրիւ: Մ. Գ. ՏՈՄՊԱԼԵԱՆ

شرائط اشترا
بر سنه لکی بر مجید
التي آیلنی یارم مجیددر

آماسیه

صاحب امتیاز و

مدیر مسئولی

حایقازون طبییان

یاخود

سر محرری

طشره منادیسی

سیاسی فنی ادبی اقتصادی و اخلاقی غزته در
هر اون بش کونده بر نشر اولنور

نومرو ۲

۳۰ تشرین اول ۱۳۲۷

برنجی سنه

محتویات

عنانلیلرک قوتی، وطنک سلامتی
م . ر
مرآت
خالی طوقویان فقیر قیز (شعر)
رسمی تلفرافلر و حوادث

مطبعه مزده ترکیه ارمینیجه روجه فرانسیزجه و انگلیزجه ایسانلریله هر نوع اعلانات،
اوراق تجاریه، قارت ویزتله، مکثوب باشلری، کتابلر، غزتهلر و مطبوعاته عائد سائر هر نوع
ایشار غایت تمیز و مزاق اوزره طبع اولیور. مقصد یگانه من محترم مشتریلرمیزی ممنون
قلماق در. هونانیان و یاردیمیان شرکاسی

Տպարանիս մէջ Տանկերէն, Հայերէն, Յունարէն, Ֆրանսերէն, եւ Անգլի-
իերէն լեզուներով ամէն տեսակ Ազդեր, Վաճառականական քղթեր,
Քարտ վիզիթներ, Նամակագրութիւններ, Գրքեր, Թերթեր եւ տպագրական
ուրիշ ամէն տեսակ գործեր խիստ մաքուր եւ ճաշակաւ կը տպագրուին:
Միակ նպատակնիս է գոհ թողուլ յարգելի յանախորդները:

ՅՈՎ. ՆԱՆՏԱՆ Եւ ԵԱՄՏԸՄԵԱՆ

آماسیه

مطبعة هونانیان و یاردیمیان